ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է.

1) տատանումների թափից
2) տատանումների հաճախականությունից
3) տատանումների տևողությունից
4) տատանումների ուժգնությունից

2 Մեծ սեքստան կազմված է

1) 6 աստիճանից և 5 տոնից
2) 6 աստիճանից և 4.5 տոնից
3) 7 աստիճանից և 6 տոնից
4) 7 աստիճանից և 5.5 տոնից

3 Մծ.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
2) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
3) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
4) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից

4 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
2) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
3) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
4) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով

5 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

6 D_2 -ը կառուցվում է

1) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
2) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
4) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3

7 VII_3^4- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + մ.2 + փ.3
2) փ.3 + մծg.2 + փ.3
3) մծg.2 + փ.3 + փ.3
4) մ.2 + փ.3 + փքg.2

8 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
2) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
3) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
4) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3

9 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) հնչյունաշար
2) գամմա
3) արպեջիո
4) տոնայնություն

10 Համանուն տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

11 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) 6^+ աստիճանը
2) 7^+ աստիճանը
3) 6^-, 7^- աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
4) 6^-, 7^- աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս

12 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Իոնական, Անհեմիտոն, Դորիական
2) Լիդիական, Միքսոլիդիական, Լոկրիական
3) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական
4) Միքսոլիդիական, Փռյուգիական, Հարմոնիկ

13 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) մետր
2) չափ
3) տակտ
4) ռիթմ

14 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սեքստոլը, կվինտոլը, տրելը
2) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
3) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
4) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը

15 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) հնչյունների քանակն է
2) պարզ չափերի քանակն է
3) նոտաների քանակն է
4) տակտերի քանակն է

16 ♯ նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) սոպրանոյի բանալի
2) ալտի բանալի
3) տենորի բանալի
4) մեցցո-սոպրանոյի բանալի

17 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրիոլ
2) տրեմոլո
3) տրիո
4) տրել

18 Հետևյալ տերմինները՝ **Commodo**, **Prestissimo**, **Agitato**, **Amabile**, **Doloroso** նշանակում են (ըստ հերթականության)

1) հարմարավետ, ծայրահեղ արագ, հուզված, հաճելի, թախծալի
2) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
3) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
4) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ

19 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) խիտ, լայն և խառը
2) խիտ և լայն
3) խիտ և խառը
4) լայն և խառը

20 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) կոնտրապունկտ
2) իմիտացիա
3) ֆուգա
4) կանոն

21 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն, խիստ և ազատ
2) հնագույն, խիստ և խառը
3) հնագույն, խառը և ազատ
4) հնագույն և ազատ

22 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման

1) ABACA
2) ABCAB
3) ABACAB[1]A
4) ABCBA

23 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Ռոմանոս Մելիքյան
2) Կոմիտաս
3) Տիգրան Չուխաջյան
4) Բարսեղ Կանաչյան

24 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Գրիգոր Եղիազարյան
2) Ալեքսանդր Հարությունյան
3) Արամ Խաչատրյան
4) Առնո Բաբաջանյան

25 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հայկական «Հնգյակի» անդամ.

1) Գրիգոր Եղիազարյան
2) Ղազարոս Սարյան
3) Տիգրան Մանսուրյան
4) Երվանդ Երկանյան

26 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Յոհաննես Բրամս
2) Ֆերենց Լիստ
3) Ֆրանց Շուբերտ
4) Ֆելիքս Մենդելսոն

27 Ո՞ր դպրոցի ներկայացուցիչն է ջութակահար, կոմպոզիտոր Յան Ստամիցը.

1) Դարմշտադյան դպրոց
2) Մանհայմյան դպրոց
3) Վիեննական դասական դպրոց
4) Չեխական դպրոց

28 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Անուշավան Տեր-Ղևոնդյան
2) Ղազարոս Սարյան
3) Տիգրան Մանսուրյան
4) Էդվարդ Միրզոյան

29 Կլաուդիո Աբադո, Եվգենի Մրավինսկի, Անտոն Գակկել, Դավիթ Խանջյան՝ հանրաճանաչ

1) կոմպոզիտորներ են
2) դիրիժորներ են
3) ջութակահարներ են
4) թավջութակահարներ են

30 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) պուանտիլիստական
2) մոդալ
3) դոդեկաֆոն
4) պոլիֆոնիկ

31 Ի. Ս. Բախի Բրանդենբուրգյան կոնցերտներից ո՞րն է քառամաս, և հետագայում այն անվանվել է «Սիմֆոնիա».

1) թիվ 1
2) թիվ 6
3) թիվ 4
4) թիվ 3

32 Ո՞ր ժանրում չի գրել կոմպոզիտոր և վիտուոզ ջութակահար Արկանջելո Կորելլին (XVII դար).

1) կոնչերտո գրոսսո
2) լարային քառյակ
3) եկեղեցական սոնատներ
4) տրիո-սոնատներ

33 Ո՞վ է հեղինակել «Աղեղի արվեստը» 50 վարիացիայից բաղկացած շարքը.

1) Արկանջելո Կորելլի
2) Անտոնիո Վիվալդի
3) Ջուզեպպե Տարտինի
4) Դոմենիկո Սկարլատտի

34 Ո՞վ է մի մինոր ջութակի կոնցերտի հեղինակը.



1) Ֆելիքս Մենդելսոն
2) Յան Սիբելիուս
3) Նիկոլայ Մյասկովսկի
4) Ալեքսանդր Գլազունով

35 Երգեհոնը

1) ստեղնաշարային- լարային գործիք է
2) ստեղնաշարային գործիք է
3) ստեղնաշարային-փողային գործիք է
4) ստեղնաշարային-կսմիթային գործիք է

36 Ջովաննի Պալեստրինա, Օրլանդո դի Լասսո, Ժոսկեն Դեպրե՝

1) ջութակի վարպետներ են
2) կատարողներ են
3) կոմպոզիտորներ են
4) փիլիսոփաներ են

37 Ու՞մ գրչին է պատկանում «Գերմանական Ռեքվիեմը»

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Յոհաննես Բրամս
3) Ալֆրեդ Շնիտկե
4) Տիգրան Մանսուրյան

38 Դմիտրի Շոստակովիչի ո՞ր սիմֆոնիան է բաղկացած 11 մասից.

1) թիվ 5
2) թիվ 13
3) թիվ 10
4) թիվ 14

39 Ո՞վ է «Նվիրում Պագանինիին» մենակատար ջութակի համար ստեղծագործության հեղինակը.

1) Յանիս Քսենակիս
2) Պաուլ Հինդեմիթ
3) Ալֆրեդ Շնիտկե
4) Կառլ Օրֆ

40 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական ռապսոդիաների» հեղինակը.

1) Ֆելիքս Մենդելսոն
2) Ֆերենց Լիստ
3) Յոհաննես Բրամս
4) Ռոբերտ Շուման

41 Ի՞նչ գամմաներ է հարկավոր անցնել I դասարանում

1) 3 օկտավ
2) 1 օկտավ
3) 2 օկտավ
4) խրոմատիկ

42 Քանի՞ էտյուդ է պետք անցնել I դասարանում

1) 2-4
2) 5-7
3) 10-12
4) 8-10

43 Ո՞ր դասարանից է սկսվում զույգ նոտաների ծանոթությունը

1) IV
2) II
3) I
4) III

44 Ի՞նչ շտրիխներ են անցնում III դասարանում

1) Դետաշե, ստակատո, մարտլե
2) Ստակատո, մարտլե, Վիոտի
3) Դետաշե, սոտիյե, սպիկատո
4) Դետաշե, լեգատո, մարտլե

45 Ո՞ր հեղինակի էտյուդների կամ Կապրիսների գիրքը ներառված չէ ուսումնական ծրագրում

1) Նիկոլո Պագանինի
2) Յակոբ Դոնտ
3) Ռուդոլֆ Կրեյցեր
4) Ժակ Ֆերեոլ Մազաս

46 Նշված շտրիխներից ո՞րն է կատարվում նստած, լայն աղեղով

1) Ստակատո
2) Սպիկատո
3) Դետաշե
4) Սոտիյե

47 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում Բարոկո դարաշրջանին

1) Անտոնիո Վիվալդի
2) Լյուդվիգ վան Բեթհովեն
3) Գեորգ Ֆրիդրիխ Հենդել
4) Յոհան Սեբաստիան Բախ

48 Ո՞վ է եղել հանրահայտ ջութակահար Յաշա Հայֆեցի ազգությամբ հայ առաջին ուսուցիչը

1) Դավիթ Դավթյան
2) Հովհաննես Ղալամյան
3) Հովհաննես Նալբանդյան
4) Հայկ Կյուտենյան

49 Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ջութակի կոնցերտների մասերը սովորաբար հաջորդում են հետևյալ սկզբունքով.

1) Դանդաղ, արագ, դանդաղ
2) Արագ, դանդաղ, արագ
3) Արագ, արագ, դանդաղ
4) Դանդաղ, դանդաղ, արագ

50 Քանի՞ մասից է բաղկացած Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակներ» կոնցերտային ցիկլը

1) 4
2) 10
3) 12
4) 18

51 Ի՞նչ հաջորդականությամբ են գրված Յոհան Սեբաստիան Բախի մենանվագ Սոնատները

1) Արագ, դանդաղ, արագ, դանդաղ
2) Դանդաղ, արագ, դանդաղ, արագ
3) Արագ, արագ, դանդաղ, դանդաղ
4) Դանդաղ, դանդաղ, արագ, արագ

52 Ո՞ր դասարանից են աշակերտին փոխադրում ջութակից ալտի

1) II
2) IV
3) V
4) VII

53 Ու՞մ է նվիրված Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը

1) Լեոնիդ Կոգան
2) Վիկտոր Պիկայզեն
3) Յուլիան Սիտկովեցկի
4) Դավիդ Օյստրախ

54 17-18-րդ դարերի ո՞ր կոմպոզիտորի գրչին է պատկանում հանրահայտ «Դիվային դայլայլներ» սոնատը

1) Արկանջելո Կորելլի
2) Ֆրանչեսկո Ջեմինիանի
3) Ջուզեպե Տարտինի
4) Պիետրո Լոկատելի

55 Ու՞մ գրչին է պատկանում «24 կապրիս» op.1

1) Պիեռ Ռոդե
2) Յակոբ Դոնտ
3) Հենրիկ Վենյավսկի
4) Նիկոլո Պագանինի

56 Ո՞ր հայ թավջութակահարն է արժանացել Պյոտր Չայկովսկու անվան միջազգային մրցույթի I մրցանակի

1) Գերոնտի Թալալյան
2) Մեդեա Աբրահամյան
3) Նարեկ Հախնազարյան
4) Արամ Թալալյան

57 Նշեք հայ ջութակահարի, ով 33 ժամ անընդմեջ նվագելով, գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում

1) Էդուարդ Թադևոսյան
2) Ռուբեն Ահարոնյան
3) Հրաչյա Հարությունյան
4) Նիկոլայ Մադոյան

58 Հայ կոմպոզիտորներից ո՞վ է օգտագործել իր Ջութակի և դաշնամուրի համար գրված պիեսը Ջութակի և նվագախմբի համար կոնցերտի III մասում

1) Էդվարդ Միրզոյան
2) Ղազարոս Սարյան
3) Ալեքսանդր Հարությունյան
4) Էդուարդ Հայրապետյան

59 Թավջութակի և նվագախմբի համար քանի՞ կոնցերտ է պատկանում Յոզեֆ Հայդնի գրչին

1) 3
2) 2
3) 5
4) 4

60 Ինչպե՞ս է կոչվում Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի Կոնցերտը ջութակի, ալտի և նվագախմբի համար

1) Գրանդ Դուո
2) Դուո Կոնցերտ
3) Սիմֆոնիա - Կոնչերտանտե
4) Երկխոսություն